ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԳՄ ԷԱՃԾՁԲ-24/01» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«14» «12» 2023թ.**
ժ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Յուրա Մուշեղյան
Հանձնաժողովի անդամներ Գևորգ Խաչատրյան,Արսեն Մելքոնան,Գուրգեն Մելքոնյան,Գեղամ Չարվադարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան

Օրակարգում

1. ***Մասնակցի հայտում առկա անհամապատասխանությունների շտկման մասին.***
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների *ձեռքբերման նպատակով կազմակերպված* **«ՀՀ ԳՄ ԷԱՃԾՁԲ-24/01»** ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով/մինչև 14.12.2023թ. ժամը 15.00/: <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ –ի ներկայացրած հայտում բացակայում էր հրավերի գնային առաջարկին կցված՝ ծառայության մատուցման առանձին տարրերի միավոր գները՝ համաձայն ներկայացված ձևաչափի: Մասնակցի կողմից ներկայացվեց պահանջվող փաստաթուղթը:

1. **«ՀՀ ԳՄ ԷԱՃԾՁԲ-24/01» ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.**

2.1 <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ –ի հայտը գնահատել բավարար, քանի որ համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին և հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

2.2 <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ –ին ճանաչել ընտրված մասնակից:

2 3 Կիրառել անգործության ժամկետ. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.4 Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղադրել gnumner.am կայքում:

2.5 Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Նախագահ՝ _____ Յու. Մուշեղյան

Անդամներ՝ _____ Գ. Խաչատրյան

_____ Ա. Մելքոնյան

_____ Գ. Մելքոնյան

_____ Գ. Չարվադարյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան